Մրցույթ

ՀՀ Արմավիրի մարզի «Գետաշենի միջնակարգ դպրոց » ՊՈԱԿ-ի «Երաժշտություն»

(5 դասաժամ), «Ֆիզկուլտուրա » (12 դասաժամ), ուսուցչի թափուր տեղի համար :

Մրցույթն անցկացվելու է 2 փուլով՝ թեստավորման և հարցազրույցի։

Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարի։ Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին։

Մրցույթին մասնակցելու համար մասնկիցը տնօրենի կողմից նշանակված պատասխանատու աշխատակցին է ներկայացնում ՝

1. Դիմում (ձև 1), 1 լուսանկար, 3*4 չափսի

2. Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ), (միջին մասնագիտական կրթություն ունեցող և կամավոր ատեստավորում անցած ուսուցչի կողմից դպրոցի թափուր տեղի մրցույթին մասնակցելու դեպքում՝ միջին մասնագիտական կրթության փաստաթուղթ),

3. Անձը հաստատող փաստաթուղթ,

4. « Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան ՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը ՝ առկայության դեպքում։

5.Ինքնակենսագրություն (ձև 5),

6. Այլ պետությունների քաղաքացիները Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ։

7.Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ՝ նաև զինվորական գրքույկ։

8. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

9.Որակավորման տարրակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ։

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ ։

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ ,կամ առկա են թերություններ , մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են մինչև 2025 թվականի փետրվարի 4-ից մինչև 2025 թվականի փետրվարի 18-ը ներառյալ ամեն օր ժամը 10:00-ից 14:00, բացի շաբաթ ,կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2025 թվականի փետրվարի 21-ին ժամը 14:00-ին, ՀՀ Արմավիրի մարզի Գետաշենի միջնակարգ դպրոցում:

Հասցեն՝ Արմավիրի մարզ գ.Գետաշեն 1-ին փողոց 17 շենք

Էլ. հասցե՝ armavir_getashen@mail.ru

Բջջ. հեռախոսահամար՝ (093)437505